ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 11, 1960 Общественные науки

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ԳՐ. ԳՐԻԳՈՐՅԱՆ—ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԷՊՈՍԸ

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, 1960 թ.

Հայ բազմադարյան ժողովրդական հարուստ ստեղծագործության հոյակապ պսակը, ամենայն իրավամբ, «Սասունցի Դավիթ» հերոսական էպոսն է, որն իր բովանդակության լայնությամբ, գաղափարական հարստությամբ ու խորությամբ և գեղարվեստական անառարկելի կատարելություններով հաստատապես մտել է արվեստի համաշխարհային այնպիսի նշանավոր կոթողների շարքը, ինչպիսիք են «Իլիականը», «Ասք Իգորի գնդի մասին», «Շահնամե», «Ռոլանդի երգը», «Նիբելունգները» և այլն։ Հայ ֆոլկլորագիտությունը անցյալ դարի երկրորդ կեսերից սկսած զբաղվել է «Սասունցի Դավիթ» էպոսով և պոշակի գործ է կատարել այդ ուղղությամբ։

Սովետահայ ֆոլկլորագիտության առաջնահերթ խնդիրներից մեկը «Սասունցի Դավիթ» հերոսական էպոսի մանրազնին, բազմակողմանի ու խորը գիտական ուսումնասիրությունն է։ Այս առումով խիստ խրախուսելի երևույթ է Գրիգոր Գրիգորյանի «Հայ ժողովրդական հերոսական էպոսը» ծավալուն մենագրությունը, որը հրատարակվել է Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչության կողմից։ Նշանակալիցն այն է, որ գրախոսվող մենագրությունը իր տեսակի մեջ առաջին լուրջ քայլն է հայ ֆոլկլորագիտության մեջ, որ փորձում է հանգամանորեն տալու մեր էպոսի բազմակողմանի վերլուծությունը՝ գաղափարակն և գեղարվեստական իր առանձնահատկություններով։

Իր շուրջ 700 էջանոց ծավալուն ուսումնասիրության մեջ ընկ. Գրիգոր Գրիգորյանը նպատակ է դնում, ինչպես ինքն է ասում, «...էպոսի գաղափարական առաջավոր բովանդակության, գեղարվեստական կատարելության ու արտահայտչական միջոցների քննությամբ, ըստ ամենայնի լուծել էպոսի ժողովրդայնության պրոբլեմը և ցույց տալ նրա արվեստի ժողովրդայնությունը» (էջ 100)։

Ինչ խոսք, որ «Սասունցի Դավիթ» էպոսի ժողովրդայնության պրոբլեմը լուծելու պրոցեսում հեղինակը բնականաբար շոշափել է ստեղծագործության հետ անմիջապես կապ ունեցող բազմաթիվ ու բազմազան հարցեր ու փորձել ամենուրեք իր վերաբերմունքն ու գնահատականը տալ։

Իր առաջ դրած հիմնական խնդիրը լուծելու համար հեղինակը լուսաբանում է էպոսի գաղափարական, սոցիալական բովանդակությունը, նրա ծագման ու ձևավորման պատմական ժամանակաշրջանը իր առանձնահատկություններով, վերլուծում նրա հիմնական հերոսների կերպարները և քննարկում պատկերավորման ու արտահայտչական միջոցները։

Իր ուսումնասիրության առաջին 100 էջը հեղինակը նվիրում է «Սասունցի Դավիթ» էպոսի ուսումնասիրության պատմությանը։ Այս բաժինը ինքնին արժեքավոր է այն առումով, որ հեղինակը հանգամանորեն խոսելով նախասովետական և ապա սովետահայ ֆոլկլորագիտության մեջ՝ էպոսի ուսումնասիրության ուղղությամբ կատարած աշխատանքների մասին, բացահայտում և ըստ արժանավույն գնահատում է ձեռք բերված շոշափելի դրական արդյունքներն ու նվաճումները և վեր հանում ու քննադատում այն հակագիտական կոնցեպցիաներն ու մեթոդները, որոնք տեղ են գտել հայ ֆոլկլորագիտության մեջ։

Հեղինակը նշում է, որ անցյալ դարի կեսերից սկսած հայ ֆոլկլորագիտությունը զբաղվել է «Սասունցի Դավիթ» էպոսով, և ճշմարտացիորեն ընդգծում է Սրվանձտյանի, Արեղյանի, Խալաթյանցի, Թումանյանի և այլ հայ գիտնականների ու գրողների կատարած ծառայությունները։ Ելնելով մարքս-լենինյան գիտական մեթոդոլոգիայի հիմքից, հեղինակը բացահայտում է ֆոլկլորագիտության մեջ եղած տարբեր դպրոցների և ուղղությունների՝ միֆոլոգիական, պատմական, փոխառությունների տեսության և այլն, էությունը, ուսումնասիրման նրանց մեթոդները և այլն։

Վերհանելով անցյալի ֆոլկլորագետների, մասնավորապես Մ. Աբեղյանի կատարած ծառայությունները, միաժամանակ իրավացիորեն քննադատում է այն հակագիտական կոնցեպցիան, համաձայն որի «Սասունցի Դավիթ» էպոսը համարվում է ազնվական, պալատական վերնախավի ստեղծագործություն, նկատի ունենալով այն բանը, որ էպոսի գլխավոր հերոսները իշխաններ, թագավորներ են, կամ իշխանական ծագում ունեն։ Հեղինակը ելնելով էպոսի բովանդակության, նրանում արտահայտված գաղափարի և գեղարվեստական առանձնահատկության անհերքելի փաստերից, համոզիչ կերպով ապացուցում է, որ «Սասունցի Դավիթը» ամբողջությամբ ժողովրդական ստեղծագործություն է, ստեղծվել է ժողովրդի կողմից և ոչ միայն վերնախավային չէ, այլ որոշ իմաստով ուղղված է վերնախավի դեմ։ Իրականում հենց այս թեզի պաշտպանությունն է հեղինակի խնդրի կենտրոնական առանցքը։ Հեղինակը հիմնականում կատարում է իր առաջ ծառացած խնդիրը։

Հեղինակն իրավացի է, երբ նկատում է, որ «Սասունցի Դավիթ» էպոսի իրական գիտական ուսումնասիրությունը սկսվում է սովետական ժամանակաշրջանում, մասնավորապես 30-ական թվականներից սկսած, երբ նախապատրաստվում և տոնվում է մեր էպոսի հազարամյա հոբելյանը։

Հեղինակը իր առաջ դրած խնդիրը՝ էպոսի ժողովրդայնության պրոբլեմը, քննարկում է գրքի երեք մասերում. առաջինում խոսում է «Սասունցի Դավիթ» էպոսի գաղափարական բովանդակության հիմնական գծերի մասին, երկրորդ մասը նվիրում է էպոսի կերպարների վերլուծությանը, իսկ երրորդ մասում քննարկում է էպոսի արտահայտչական միջոցները։

Իր ուսումնասիրության մեջ հիմք ունենալով ազգային երկու կուլտուրաների մասին լենինյան ելակետային դրույթը, հեղինակը կարողանում է հանգամանորեն ու ճշմարտացի բացահայտել «Սասունցի Դավիթ» էպոսի խորը գաղափարայնությունը, նրա ժողովրդայնությունը, ցույց տալ, որ էպոսում արտահայտված գաղափարները ոչ միայն որևէ կերպ չեն առնչվում ֆեոդալական հասարակության վերնախավի հետ, իշխող ազնվականության հետ, այլ, ընդհակառակը, այդ գաղափարները հակադրվում են ամեն տեսակ ներքին և արտաքին տիրողների և անմիջապես ելնում են հասարակ ժողովրդի, աշխատավոր մարդու դահերից և պաշտպանում են այդ շահերը։ Իր մենագրության մեջ հեղինակը ապացուցում և իրավացիորեն ընդգծում է պատմական այն ճշմարտությունը, որ «Սասունցի Դավիթ» էպոսը հիմնականում ձևավորվել և ամբողջացել է հայ ժողովրդի այն հերոսական-համաժողովրդական տևական պայքարի հիմքի վրա, որ մղվել է ընդդեմ արաբական զավթիչների և արաբական տիրապետության։ Իր և իր հայրենիքի ազատության տենչը հայ ժողովրդին մղել է հերոսացման, թշնամու դեմ անհաշտ պայքարի, և այդ պայքարը ծնել է հերոսներ ու հերոսացում, որը և իր վիպական արտահայտությունը, ընդհանրացումը և գեղարվեստական կոնկրետացումն է գտել էպոսի մեջ։ Անսահման հայրենասիրությունը, կրակոտ ատելությունը թշնամիների ու կեղեքիչների նկատմամբ, անհուն նվիրվածությունը ազատության ու անկախության վեհ գործին — ահա այն հատկանիշները, գծերն ու գործունեության վարքագծի հիմքը, որով ծավալվում է էպոսի հերոսական-վիպական բովանդակությունը։ Ինչ խոսք, որ հեղինակին հաջողվել է իր ծավալուն մենագրության մեջ հանգամանորեն ու համոզիչ վերհանել այն և կոնկրետ փաստերի միջոցով հաստատել։

Հայ ժողովրդական հերոսական էպոսի հարուստ բովանդակության, նրա առաջատար գաղափարների վերհանման ու կոնկրետացման իր խնդրում հեղինակը քննարկում է այն հանգամանքը, որ էպոսը ծագել ու ծնունդ է առել ժողովրդական ներքնախավերի մեջ. նրա ասացողներն ու մշակողները հասարակ մարդիկ են եղել, հալածական ու անպաշտպան կյանքով ապրող չարքաշներ և հենց այդ մարդկանց, հասարակության սոցիալական այդ ստորին խավերի պայքարի, ակնկալումների ու սպասումների, նրանց շահերի ու ձգտումների, նրանց ժողովրդական պայծառ լավատեսության ու հումանիզմի կոնկրետ գեղարվեստական արտացոլումն է հանդիսանում էպոսը։ Հեղինակը միանգամայն իրավացի է, գրելով, որ «Սասունցի Դավիթ» էպոսում արտացոլված է ժողովրդի ծանր կյանքը, հարստահարիչների դեմ նրա մղած հերոսական կռիվները և գալիքի նկատմամբ ունեցած նրա ակնկալումները։ «Էպոսն ամբողջությամբ ժողովրդական աշխարհազգացման և աշխարհայացքի արդյունք է։ Այն ժողովրդի աչքերով է նայում ոչ միայն 9—10-րդ դարերում ծավալվող իրադարձություններին, այլ նաև անցյալին ու ապագային...» (էջ 116)։

«Հայ ժողովրդական հերոսական էպոսը» մենագրության իրական արժանիքներից մեկն այն է, որ նրանում հեղինակը էպոսի իր ուսումնասիրությունը չի սահմանափակում նկատի ունենալով միայն 9—10-րդ դարերի իրականությունն ու դեպքերը։ Նա իրավացիորեն քննարկում ու լուսաբանում է այն կապերն ու ներթափանցումները, որն ունի էպոսը հայ ժողովրդի անցյալի բազմադարյան պատմության և ժողովրդական ստեղծագործության հետ։ Անհերքելի է հեղինակի այն

գնդումը, թե էպոսը մի քանի դարերի գեղարվեստական պատմություն չէ, այլ շատ ավելի երկար պատմական ժամանակաշրջանների էական ու բնութագրական կողմերի միասնական ու ամբողջական արտահայտությունն է։ Այս ուղիով էլ էպոսը դարձել է հայ ժողովրդի ողջ պատմությունը, նրա փոթորկալից կյանքի, աշխարհըմբռնման և փիլիսոփայության հավերժ կենդանի գիրքը։ Այս ամենից հետո հեղինակը հանգում է այն ճշմարտացի հետևությանը, որ էպոսի ժողովրդային լինելու փաստը արտահայտվում է հենց նրանով, որ այն «ճշմարտացիորեն արտացոլում է ժողովրդի կյանքը, արտաքին ու ներքին կեղեքիչների դեմ մղած հերոսամարտերը, ինչպես նաև պատերազմի ու խաղաղության, աշխատանքի ու բարեկամության ժողովրդական ըմբռնումը» (էջ 126)։ Հեղինակին հաջողվել է, անշուշտ, կոնկրետ փաստերի և իրադրությունների հանգամանալից վերլուծության միջոցով ապացուցել իր հետևությունը։

«Սասունցի Դավիթ» էպոսի հարուստ բովանդակությունը երբեք չի կարելի շրջանակավորել միայն արտաքին նվաճողների ու հարստահարիչների դեմ հայ ժողովրդի մղած երկարատև հերոսական գոտեմարտերով։ Ժողովուրդն իր մոնումենտալ ստեղծագործության մեջ արտացոլել է իրականության բարդ ու բազմազան երևույթներ՝ իրենց բազմակողմանիության ու խորության մեջ, արտահայտել բազմաթիվ գաղափարներ։ Գրախոսվող գրքի հեղինակը իր ուշագրավ ուսումնասիրության մեջ հայտնաբերում ու ցույց է տալիս այն ճշմարտությունը, որ էպոսում իրենց որոշակիությամբ հանդես են եկել ժողովրդին հատուկ խաղաղասիրության, ինտերնացիոնալիզմի, ժողովրդական հումանիզմի, ժողովուրդների բարեկամության, համերաշխության, խաղաղ և ստեղծագործ աշխատանքի գովերգման առաջադիմական գաղափարները։ Այս ամենի հետ միասին, սակայն, «Սասունցի Դավիթ» էպոսում իր որոշակիությամբ դրսևորվել է ժողովրդի սոցիալական կյանքը իր բազմակողմանիության մեջ։ Հայ ժողովուրդը գեղարվեստական իր հոյակապ կոթողի մեջ տվել է սոցիալական ճնշումների, դասակարգային հակամարտությունների, հարստահարության ու կեղեքման, ֆեոդալական վայրագ շահագործման վառ պատկերը։ Հեղինակն իրավացի է, երբ նկատում է, թե էպոսի սոցիալական բովանդակությունը չի ամբողջանում միայն ժողովրդի ծանր կյանքի, հարստահարողների և ժողովրդի միջև եղած տարբերության ու հակասության պատկերմամբ, այլ, որ կարևոր է, այն իրական պայքարի խորն ու կենդանի մարմնավորմամբ, որ դարեր շարունակ մղել է ժողովուրդը ներքին հարստահարիչների դեմ՝ հանուն սոցիալական ազատության» (էջ 164)։

Յուրաքանչյուր գեղարվեստական ստեղծագործության մեջ արտահայտված գաղափարներն ամենից առաջ կոնկրետանում և մարմնավորվում են ստեղծագործության կերպարների, նրանց վարքագծի ու գործունեության մեջ։ Այս առումով գրախոսվող մենագրության հեղինակը իրավացիորեն նշանակալից տեղ է հատկացրել էպոսի հիմնական կերպարների վերլուծությանն ու բնութագրությանը։ Էպոսի բոլոր կերպարները միանման չեն, միևնույն նպատակներն ու ձգտումները չունեն։ Ժողովուրդը հիմնականում առանձնացրել է կերպարների երկու իրար հակադիր խումբ՝ կերպարներ, որոնք հանդես են գալիս որպես ժողովրդի շահերի, ցանկությունների ու հայացքների կրողներ և կերպարներ, որոնց գործունեությունը հակաժողովրդական է, որոնց մեջ մարմնավորված են ժողովրդի շահերին խորթ, ռեակցիոն գաղափարներ ու միտումներ։ Հեղինակը որոշակիորեն առանձնացնելով այս երկու խումբ կերպարները, ցույց է տալիս, որ ժողովրդական ձգտումները, հայացքներն ու աշխարհընկալումները մարմնավորվում են դրական հիմնական-կերպարների ու նրանց գործունեության մեջ։ Մանրակրկիտ գրական վերլուծության ենթարկելով էպոսի դրական կերպարները՝ Սանասար, Բաղդասար, Մեծ Մհեր, Սասունցի Դավիթ, Փոքր Մհեր, Խանդութ և այլ, հեղինակը ամենից առաջ ընդգծում է նրանց ժողովրդական բնույթը, առաջադիմական գաղափարների նրանց մեջ մարմնավորված լինելու հանգամանքը և նրանց գործունեությամբ այդ գաղափարների իրականացումը։ Իր սիրած հերոսների մեջ ժողովուրդը ներկայացրել է իրեն, իր ուժը, իր ձգտումներն ու հայացքները։ Դրան հակառակ, բացասական հերոսները ամբողջացվում են ժողովրդին խորթ ու ատելի գծերով։ Նրանք բռնության, կեղեքիչների ու հարստահարողների, անարդարության ու խաբեության մարմնացումներն են։

Գեղարվեստական ստեղծագործության մեջ արտահայտված հույզերն ու գաղափարները, նրանում ծավալվող գործողություններն ու դեպքերը, իրականությունն իր բազմակողմանիության մեջ արտահայտվում է արվեստին հատուկ պատկերավորման միջոցով, գեղարվեստական արտահայտչական միջոցներով։ Ընկ. Գր. Գրիգորյանի ուսումնասիրության հատկանշական կողմերից մեկն էլ այն է, որ նրանում լուրջ փորձ է արվում բազմակողմանիորեն տալ մեր էպոսի գեղարվեստական արտահայտչական միջոցների սիստեմը, նրա առանձնահատկությունները։ Հեղինակը քննարկում է գեղարվեստական այնպիսի արտահայտչական միջոցներ, ինչպես անձ-

նավորումը, համադրությունները ու համեմատությունները, հիպերբոլան, էպիտետները, կրկնությունները և այլն։

Ցույց տալով, որ «Սասունցի Դավիթ» էպոսը գեղարվեստական արտահայտչական միջոցներով հարուստ ու բազմակողմանի ստեղծագործություն է, հեղինակը միաժամանակ վեր է հանում այն ճշմարտությունը, որ գեղարվեստական արտահայտչական միջոցների կատարելությունն ու վարպետությունը այն հիմնական գրավականներից են, որոնցով գեղարվեստի ստեղծագործությունը մնում է որպես հավերժական, մնայուն մի երևույթ և բոլոր ժամանակների համար անխախտ է պահում էսթետիկական անսահման հաճույք պատճառելու իր կարողությունը։

Հեղինակը իրավացի է իր այն գրույթի մեջ, որ էպոսի գեղարվեստական արտահայտչական միջոցների կատարելությունը, հարստությունն ու բազմազանությունը անմիջականորեն կապվում է էպոսի ժողովրդայնության հետ և դառնում նրա կոնկրետացման կարևոր պայմաններից մեկը։

Նկատելով «Հայ ժողովրդական հերոսական էպոսը» ուսումնասիրության ինքնին ուշագրավ և արժեքավոր երևույթ լինելը սովետահայ ֆոլկլորագիտության մեջ, միաժամանակ անհրաժեշտ ենք համարում նշելու այդ աշխատանքի մի քանի թերությունները։

1. Հեղինակը որևէ տարբերություն չի դնում ժողովրդային և ժողովրդական հասկացությունների միջև և միայն ընդունում է ժողովրդայնությունը։ Բանն այն է, որ «Սասունցի Դավիթ» էպոսը, ինչպես և ինքն է իր ուսումնասիրության վերնագրում հաստատում, ժողովրդական էպոս է. նա պատկանում է հայ ժողովրդին, ստեղծվել է նրա կողմից և հակագիտական են այն բոլոր կարծիքները, որոնք փորձում են այն վերագրել իշխող խավերին։ Այս ճշմարտության ապացուցումը հեղինակի հիմնական խնդիրներից է և նա հաջողությամբ ապացուցում է այն, սակայն ժողովրդական լինելը նրա մոտ փոխարինվում է ժողովրդային լինելով։ Այս երկու հասկացությունները տարբեր բաներ են և պետք է հեղինակի մոտ որոշակիորեն դրվեր ու երևար այդ տարբերությունը, որը չկա։ Ամեն մի ժողովրդային ստեղծագործություն պարտադիր չէ, որ ժողովրդական լինի։ Համաշխարհային գրականությունը իր ամբողջության մեջ հիմնականում ժողովրդային է, բայց նա ժողովրդական չէ, ժողովուրդը չի ստեղծել այն, այլ առանձին ստեղծագործող հեղինակներ։ Այս տարբերության անտեսումն էլ բնականորեն հանգեցրել է հակասությունների։ Խոսելով այն մասին, որ իշխող դասակարգերը ժողովրդական բանահյուսության որոշ նմուշներ նենգափոխում և օգտագործում են իրենց դասակարգային շահերի տեսակետից, իրավացիորեն գրում է, թե «այս նշանակում է, որ այն ինչ ապրում է ժողովրդի մեջ, ժողովրդական տեսքով, դեռևս ժողովրդային չէ» (էջ 107)։ Հեղինակի բառերով ասած, այս նշանակում է, թե ամեն մի ժողովրդական էլ դեռևս իրոք, ժողովրդային չէ։ Հեղինակն այստեղ մի այլ հակասության մեջ էլ է ընկնում, որովհետև մի քանի էջ հետո գրում է այնպիսի միտք, որը հակասական է վերն արտահայտված մտքին. «Սասունցի Դավիթ» էպոսը,— գրում է հեղինակը,—ժողովրդային է (ընդգծումը մերն է Բ. Ց.) նաև այն պատճառով, որ հազար տարի ապրել է իր ստեղծող ժողովրդի շուրթերին, բանավոր կյանքով» (էջ 112)։ Նախ նկատենք, որ այս միտքը հաստատում է էպոսի ժողովրդական լինելը և ոչ նրա ժողովրդայնությունը, և ապա այն, որ ժողովրդի մեջ տարածում ունեցող ամեն մի ստեղծագործություն չէ, որ ժողովրդային է, ինչպես ինքը հեղինակը իրավացիորեն նկատում է իր գրքի 107-րդ էջում։

2. Զևակերպումների մեջ հեղինակը չի կարողանում խուսափել կրկնություններից ու հակասություններից։ 112-րդ էջում արտահայտած միտքը կրկնում է 115-րդ էջում և այլուր։ Միևնույն պարբերության մեջ հանդիպում ենք մտքերի որոշակի հակասություն. այսպես օրինակ. իր մենագրության 115-րդ էջում հեղինակը գրում է. «Ժողովրդական ծագում, հազարամյա բանավոր կյանք, բազմավարյանտություն և լայն տարածվածություն — ահա այն հատկանիշները, որոնք բացահայտում և ընդգծում են «Սասունցի Դավթի» խոր ժողովրդայնությունը... Սակայն պետք է նկատել.—կցում է հեղինակը,—որ էպոսի ժողովրդայնության պրոբլեմի լուծման համար դրանց հետ միասին կարևոր և վճռական նշանակություն ունեն նրա գաղափարական բովանդակության խորությունն ու գեղարվեստական ձևի կատարելությունը»։ Այս պարբերության մեջ շատ կան անհարիր բաներ. նախ. ճիշտ չէ ժողովրդայնությունը վճռականապես պայմանավորել էպոսի ժողովրդական ծագմամբ, հազարամյա գոյությամբ կամ բազմավարիանտությամբ, մանավանդ. որ ինքը հեղինակը նկատում է. որ էպոսի որոշ վարիանտներ շատ են հեռու ժողովրդայնությունից։ Հեղինակի հիշած հատկանիշները կարող են լինել էպոսի ժողովրդականության չափանիշը, բայց ոչ նրա ժողովրդականության չափանիշը։ Որևէ ստեղծագործության ժողովրդայնություն իրականում կարելի է բացահայտել ու ապացուցել մեր մեջ բերած պարբերության վերջում հեղինակի նշած գաղափարական բովանդակությամբ և գեղարվեստական

ձևի կատարելությամբ միայն, գործոններ, որոնց սակայն հեղինակը երկրորդական տեղ է հատկացրել. չնայած ուսումնասիրությունը հեղինակի կողմից վարվում է ճշմարտացի ուղիով։

3. Ճշմարտացի նկատելով, որ էպոսը արտացոլել է իր ժամանակաշրջանի (9—11-րդ դարեր) իրականության բազմակողմանիությունը, այդ ժամանակաշրջանի «երկրորդ էական կողմը» համարում է «սկզբնավորվող վերածնունդը»։ 9—11-րդ դարերում, այսպես կոչված, «Հայկական վերածննդի» հարցը մի այնպիսի հարց է, որը շատ լուրջ ուսումնասիրությունների է կարոտ։ «Հայկական վերածննդի» հարցն առաջ քաշող հեղինակները վերածնունդն ինքնին ընդունում են, ամենաշատը, որպես մի կուլտուր-գրական երևույթ և ոչ որպես պատմա-հասարակական բեկումնային մի երևույթ, հասարակության զարգացման մի այնպիսի պրոցես, երբ մարդկության հասարակական կյանքը մինչ այդ չտեսնված բեկում ապրեց։ Նման մի դեռևս գիտականորեն չհիմնավորված հարցի մասին խոսելուց հեղինակը պարտավոր էր, առնվազը, մի որոշ չափ քիչ թե շատ լուրջ հիմնավորում տալ, այլ կերպ հայտարարության կարգով խոսել այդպիսի մի լուրջ և առեղծվածային հարցի մասին, առնվազն ավելորդ է։

4. Իր ուսումնասիրության բազմաթիվ տեղերում հեղինակը շոշափում է «Սասունցի Դավիթ» էպոսի և նրա հիմնական հերոսների ազգային լինելու հարցը, որն իրոք կարևոր հարց է։ Հեղինակը միանգամայն իրավացի է գտնելով, որ «կատարյալ, ուրեմն և համամարդկային է այն, ինչ խորապես ազգային է» (էջ 224), սակայն, ինչպես կերպարների բացահայտման մեջ, այնպես էլ ընդհանրապես ազգային հատկանիշների համակողմանի բացահայտման մեջ այդ հարցը իր իրական լուծումը չի ստացել։ Ազգային առանձնահատկությունները որոշակիորեն ձևակերպելը հեղինակին չի հաջողվում։ Որպես ազգային առանձնահատկություններ հեղինակը նշում է՝ բուռն սեր դեպի ազատությունը, ցասումնալից և հերոսական ոգի, հզոր կամք, պայծառ լավատեսություն, հաստատ ու համառ բնավորություն և այլ նման բաներ, որոնք կարելի է վերագրել աշխարհի բոլոր ժողովուրդներին, և ոչ միայն հայերին։

5. Խոսելով «Սասունցի Դավիթ» էպոսի բովանդակության դրսևորման հանդարտ ու հանդիսավոր բնույթի մասին, հեղինակը այդ երևույթի պատճառների բացահայտման հարցում ճշմարտացի չէ։ Նախ նա այն կարծիքին է, թե այդ բանը չի կարելի պայմանավորել ժանրային առանձնահատկությամբ և փորձում է այն բացահայտել էպոսի գաղափարական բովանդակությամբ։ Ի դեպ նկատենք, որ հեղինակը բավականին քմահաճ է ստեղծագործության բովանդակությունն ու գաղափարը նույնացնելու հարցում։ Գեղարվեստական ստեղծագործության բովանդակության և նրանում արտահայտված գաղափարի նույնացումը հանգեցնում է այն բանին, որ նա հաճախ տալիս է ոչ ճիշտ բնութագրություններ ու ձևակերպումներ։ Նույնը կատարվել է այս հարցում։ Իր գրքի 879-րդ էջում հեղինակը գրում է. «Էպիքական հանդիսավորության հիմքը ստեղծագործության բովանդակությունն է, նրա մեջ գրված կամ նրանով դրսևորված գաղափարը»։ Բոլորովին ճիշտ չի լինի ստեղծագործության մեջ արտահայտված գաղափարով պայմանավորել նրա էպիկական հանդիսավորությունը, դրամատիզմը կամ քնարական բնույթը։ Միևնույն գաղափարը կարելի է արտահայտել տարբեր կերպ։ Ասենք հայրենասիրության գաղափարը կարելի է արտահայտել և՛ էպիկական հանդարտությամբ ու հանդիսավորությամբ, և՛ դրամատիզմի շնչով, և՛ քնարական հուզականությամբ ու քնքշությամբ, և՛ ներբողի պաթետիկայով և այլն։ Էպոսի հանդարտությունն՝ ու էպիկական հանդիսավորությունը պայմանավորվում է ոչ թե նրա գաղափարով, այլ նրա ամբողջական բովանդակության առանձնահատկություններով։ Ընդ որում ժանրային մոմենտը լիակատար մոռացության տալ, ինչպես հեղինակն է անում, ճիշտ չէ։ Գեղարվեստական ժանրային ձևի հարցը լոկ իր իներտության, պասսիվության մեջ չէ, որ պետք է դիտել, այլ նրա և ստեղծագործության բովանդակության դիալեկտիկական միասնության մեջ։ Ժանրային առանձնահատկությունն անշուշտ կարևոր նշանակություն ունի այսպիսի հարցերում։ Էպիկական ժանրը, հենց այնպես, ինքնին, ինչպես և յուրաքանչյուր այլ ժանր, որպես ժանր գոյություն չունի, այլ նա այդպիսին է հենց այն պատճառով, որ կապվում է համապատասխան բովանդակության արտահայտման խնդրի հետ։

6. Արվեստի որոշ առանձնահատկությունների, սպեցիֆիկումի հարցերում հեղինակի մոտ նկատելի են ոչ հստակ, երբեմն ոչ ճիշտ ձևակերպումներ ու հետևություններ։ Խոսելով այն մասին, որ արվեստի առարկան մարդն է, հեղինակը այդ բանը կոնկրետացնում է նրանով, որ արվեստի առարկան մարդն է նրա համար, «որպեսզի որոշակի կենդանի փաստ հասցրվի արվեստի աստիճանին, պետք է մարդկայնացվի, այսինքն՝ պատկերվի մարդու արարքների ու ապրումների որոշ սիստեմում» (էջ 495)։ Այս ձևակերպումը առնվազն միակողմանի է, նախ մարդը նրա համար չէ արվեստի օբյեկտը, որպեսզի հեղինակը նրանով փաստերը «բարձրացնի արվեստի աստիճանի»։ Մարդն արվեստի օբյեկտ է նրանով, որ նա, Մարքսի արտահայտությամբ, հասարակական երևույթների համակցություն է։ Գրախոսվող

գրքի հեղինակի մոտ մարդը լոկ միջոց է դարձել՝ իրականության փաստերը «արվեստի աստիճանի բարձրացնելու» համար։ Բանը նրանում է, որ հեղինակը, այն ճշմարտությունը, որ գեղարվեստական ստեղծագործությունը իրականությանը վերարտադրում, պատկերում է մարդու շահերի, ակնկալումների, ձգտումների ու պատկերացումների տեսակետից, չի կարողացել որոշակիորեն արտահայտել։

Այսպիսի անորոշություններ կան նաև պատկերի ու պատկերավորման հարցերում։

Գրախոսվող մենագրությունը զերծ չէ նաև լեզվա-ոճական նկատելի անհարթություններից։

Մեր հիշած և այլ թերություններ, իհարկե, չեն կարող բացասել «Հայ ժողովրդական հերոսական էպոսը» ուսումնասիրության իրական արժեքը սովետահայ ֆոլկլորագիտության մեջ։

Թ. Տ. ՅՈՒԶԲԱՇՅԱՆ